ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(Առանձնատիպ)
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ
(Отдельные оттиски)
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE
(Reprint)

130.6

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2010

ՀՍԽՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նոր իշխանություններն անմիջապես լուծարեցին նախկին՝ դաշնակցական կառավարությունը և ձեռնամուխ եղան նոր վարչակարգի ձևավորմանը: 1920 թ. դեկտեմբերի 4-ին ժամանելով Երևան՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմնի գործառույթները ստանձնած Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հեղկոմ) ձեռնարկեց նոր իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ձևավորումը:

Իր գոյության ընթացքում Հայաստանի առաջին Հանրապետությունը դիվանագիտական կապեր էր հաստատել տարբեր պետությունների հետ: Հայաստանի հեղկոմի առաջին իրավական ակտերից մեկը 1920 թ. դեկտեմբերի 6-ին Ս. Կասյանի ստորագրած հրամանն էր, որով 1920 թ. նոյեմբերի 29-ից դադարեցվում էին նախկին կառավարության դիվանագիտական ներկայացուցչությունների ու արտասահմանյան առաքելությունների լիազորությունները: Մինչև Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների նշանակումը, դրանց գույքի պահպանությունը դրվում էր նախկինների վրա: Սահմանվում էր, որ «Խորհրդային Հանրապետություններում հայկական միսիաների լիկվիդացիան կատարվելու է խորհրդային միսիաների անմիջական հսկողությամբ»[1]: Հրամանի մասին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը դեկտեմբերի 7-ին հեռագրով տեղեկացրեց տարբեր պետություններում ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններին[2]: Սակայն վերջիններիս մեծ մասը չենթարկվեց ՀՍԽՀ իշխանությունների կարգադրությանը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին Հանրապետության գոյության վերջին օրերին վարչապետ Սիմոն Վրացյանը ստանձնել էր նաև արտաքին գործերի նախարարի գործառույթները: Դեկտեմբերի 2-ին՝ Ս. Վրացյանի կառավարության հրաժարականից հետո, թափուր մնաց նաև արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից, նախարարության ղեկավարումը ժամանակավորապես հանձնարարվեց 1920 թ. սեպտեմբերից նախարարի օգնական (տեղակալ) Մովսես Պետրոսյանին[3]: Հայաստանի հեղկոմի ելից գրությունների մատյանում 1920 թ. դեկ-

---

[1] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 1960, էջ 419, փաստ. № 270:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 6:

[3] Վերջինս կուսակցական պատկանելությամբ դաշնակցական էր՝ ներկայացնում էր ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեն: 1921 թ. գարնանը Մ. Պետրոսյանը Հայաստանից անցել է Պարսկաստան: Կուսակցության վարած քաղաքական գծին համաձայն չլինելու պատճառաբանությամբ՝ 1921 թ. ամռանը հեռացել է Հ. Յ. Դաշնակցությունից (տե՛ս «Ռանջբար Իրանի» (Թեհրան), 27 օգոստոսի 1921 թ., № 6):

տեմբերի 3-ի ամսաթվով կատարված թիվ 7753 գրառումն ունի հետևյալ բովանդակությունը. «Վկայականը տրւում է պ. Մովսէս Պետրոսեանին առ այն, որ նա իրօք է Արտ[աքին] գործ[երի] նախ[արարութեան] կառավարչի պաշտօնում»[4]: Հայտնի է, որ Հայհեղկոմը Երևան է ժամանել միայն դեկտեմբերի 4-ին, ուստի Մ. Պետրոսյանին համապատասխան վկայականը, ամենայն հավանականությամբ, տրվել էր Դրոյի և Օ. Սիլինի կողմից:

Ժամանելով Երևան՝ Հայաստանի հեղկոմը չշտապեց արտաքին գործերի նոր ժողկոմ նշանակել. Մ. Պետրոսյանը մնաց պաշտոնակատար: Հավանաբար արդեն որոշվել էր, որ արտաքին հարաբերությունները վստահվելու էր դեռևս Խորհրդային Ադրբեջանում գտնվող Հայհեղկոմի անդամ Ալեքսանդր Բեկզադյանին:

Մ. Պետրոսյանի՝ որպես ղեկավարի ՀՍԽՀ արտգործնախարարության մեկշաբաթյա գործունեության մասին արխիվային փաստաթղթերում սուղ տեղեկություններ են պահպանվել: Մեզ հայտնի առաջին փաստաթուղթը նախկին արտգործնախարարության մի խումբ աշխատակիցներին ՀՍԽՀ զինված ուժերի հրամանատար Դրոյի, ՌՍՖԽՀ կոմիսար Օ. Սիլինի և «արտգործնախարարության գործերի վարիչ» Մ. Պետրոսյանի կողմից դեկտեմբերի 3-ին տրված վկայականներն են առ այն, որ նրանք ծառայության մեջ են «Անկախ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության» արտաքին գործերի նախարարությունում[5]:

Հայաստանի հեղկոմը կարևորում էր իր հրամանների և տարբեր որոշումների մասին ենթակա հաստատություններին տեղյակ պահելը: Այս աշխատաոճը ձևավորվել էր հեղկոմի գործունեության առաջին օրերից: Դեկտեմբերի 7-ին Հայհեղկոմի դիվանապետ Համլիկ Թումանյանի ստորագրությամբ արտաքին գործերի նախարարությանն ուղղված գրությամբ տեղեկացվում էր, որ Հեղկոմի՝ դեկտեմբերի 6-ի № 4 հրամանի համաձայն՝ ՀՍԽՀ սահմաններում պետական լեզու էր ճանաչվում հայերենը, իսկ մահմեդականներով բնակեցված տարածքներում՝ հայերենին զուգահեռ նաև թուրքերենը[6]:

Դեռևս Առաջին հանրապետության շրջանից Երևանում զգացվում էր բնակմակերեսի սուր կարիք, որն իշխանությունները լուծում էին մեծ մասամբ բռնագրավումների կամ վարձակալության ճանապարհով: Մայրաքաղաք ժամանելուց հետո Հայհեղկոմը նույնպես ձեռնամուխ եղավ տարբեր կազմակերպություններին պատկանող շինությունների ու քաղաքացիներին պատկանող բնակարանների բռնագրավմանը: Դեկտեմբերի 8-ին Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղղված գրության մեջ արտգործնախարարության վարիչ Մ. Պետրոսյանը, տեղեկացնելով, որ «Զանազան օտար Միսսիաների շէնքերում կան Մինիստրութեանս եւ մասնաւոր անձանց պատկանող իրեր», առաջարկում էր կարգադրել, որ «այդ շէնքերը չը բռնագրաւեն առ այժմ՝ մինչեւ որ հնարաւորութիւն ունենանք նրանց մէջ եղած իրերը ստուգելու եւ պահպանելու համար պէտք եղած միջոցները ձեռք առնել»[7]: Դեկտեմբերի 10-ի պատասխան գրության մեջ Հայհեղկոմի ղեկավարությունը հայտնում է, որ տարբեր հիմնարկություններում

[4] ՀԱԱ, ֆ. 1253, ց. 1, գ. 1, թ. 3:
[5] Տե՛ս նույն տեղը, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 1:
[6] Տե՛ս նույն տեղը, ց. 2, գ. 17, թ. 4 և շրջ.:
[7] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 5:

գտնվող նախարարությանը պատկանող իրերը ստուգելու և պահպանելու համար տրվում է 3 օր[8]:

Որպես արտաքին գործերի նախարարության վարիչ՝ Մ. Պետրոսյանի ստորագրությունը կրող մեզ հայտնի վերջին փաստաթուղթը (այն ունի ելից 6823 համարը) դեկտեմբերի 10-ին «Կոմունիստ» թերթի խմբագրությանն ուղղված գրություն է, որին կից ուղարկում էր նախարարությունում ստացված տարբեր անձանց անուններով նամակները: Խնդրվում էր դրանք հրատարակել «Կոմունիստի» առաջիկա համարներից մեկում[9]:

ՀՍԽՀ արտաքին գործերի նախարարության ելից փաստաթղթերը (բացի «Կոմունիստ»-ի խմբագրությանն ուղղվածից) Մ. Պետրոսյանի հետ ստորագրել է նաև կոմիսար Ս. Սողոմոնյանը: Հետագայում ՀՍԽՀ արտգործժողկոմատի հաստիքացուցակներում կամ ելից-մտից փաստաթղթերում այս անձը կամ նման գործառույթ իրականացնող այլ պաշտոնյա այլևս չի հանդիպում: Ամենայն հավանականությամբ, ինչպես Օ. Սիլինն էր նշանակվել ժամանակավորապես պետության գերագույն իշխանությունը ստանձնած Դրոյի իշխանությանը կից կոմիսար, այնպես էլ առանց ղեկավարի մնացած արտգործնախարարությունում Ս. Սողոմոնյանն էր ժամանակավորապես կոմիսար-վերահսկիչի գործառույթներ իրականացնում:

Այսպիսով, Մովսես Պետրոսյանի՝ արտաքին գործերի նախարարության ժամանակավոր վարիչ լինելով է պայմանավորված այն հանգամանքը, որ 1920 թ. դեկտեմբերի 3-ից մինչև 10-ը ներառյալ թվագրվող մի շարք փաստաթղթեր նա է ստորագրել կամ դրանք ուղղված են նրան:

ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ստեղծման վերաբերյալ որևէ փաստաթուղթ հայտնի չէ: Սակայն արխիվային վավերագրերի և մամուլի տվյալների համադրմամբ հնարավոր է որոշել, թե երբ է ստեղծվել ժողկոմատը, և երբ է արտգործժողկոմ նշանակվել Ալեքսանդր Բեկզադյանը:

Խորհրդային Հայաստանի իշխանության մարմինների ստեղծման խնդրին անդրադարձած հեղինակներն արտգործժողկոմատի ստեղծման որոշակի օր չեն նշում. պատճառը Հայհեղկոմի համապատասխան որոշման կամ հրամանի բացակայությունն է: Որոշ ուսումնասիրողներ ոչ ճիշտ եզրահանգումներ են կատարել: Այսպես, պրոֆ. Վ. Ռ. Նազարյանն իր «Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922 թթ.)» աշխատության մեջ մասնավորապես գրում է. «Հայհեղկոմի համապատասխան ակտերով ստեղծվեց ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմատ, սահմանվեց նրա կառուցվածքը, նշանակվեցողեկավար կազմը»[10] և այնուհետև հղումկատարում արտգործժողկոմատի ստեղծումից ամիսներ անց ժողկոմատի հաստիքների հաստատմանը վերաբերող փաստաթղթին: Այն ստորագրել է արտգործժողկոմատի ընդհանուր բաժնի վարիչ Ալեքսանդր Մելյանը[11], որը ժողկոմատում աշխատանքի է անցել 1921թ. մայիսին[12]: ՀՍԽՀ առաջին արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի մասին կենսագրական աշխատանք հրատարակած պրոֆ. Հ. Ն. Կարապետ-

---

[8] Տե՛ս նույն տեղը, թ. 6:

[9] Տե՛ս նույն տեղը, ֆ. 114, ց. 1, գ. 12, թ. 3-5:

[10] **Նազարյան Վ. Ռ.**, Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922 թթ.), Եր., 1974, էջ 97:

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 141 և շրջ.: Աշխատության մեջ հղված է՝ ֆ. 40/117, ց. 3, գ. 4, թ. 141, այն դեպքում, երբ նախկին թիվ 40 ֆոնդը անվանափոխվել է միայն 113-ի:

[12] Տե՛ս նույն տեղը, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 134:

յանը, որը շուրջ 50 էջ է նվիրում արտաքին գործերի ժողկոմ եղած ժամանակ Ալ. Բեկզադյանի գործունեությանը, նույնիսկ մոտավոր ակնարկ չի կատարում արտգործժողկոմատի ստեղծման ու Ալ. Բեկզադյանի ժողկոմ նշանակման օրվա վերաբերյալ[13]: Իսկ պրոֆ. Ա. Ա. Եսայանը գրում է, թե «Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության արտաքին գործերի ժողկոմատի ստեղծումից հետո Հայաստանի սովետական կառավարության ընդունած առաջին ակտերից մեկով վերացվեցին Հայաստանի բուրժուական հանրապետության արտասահմանյան դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչությունները»[14]: Հեղինակի ասածից այնպես է ստացվում, թե ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը կազմավորվել է 1920 թ. դեկտեմբերի 6-ի Հայհեղկոմի հայտնի հրամանի հրապարակումից առաջ: Ինչպես ստորև կտեսնենք, ժողկոմատը կազմավորվել է նշված հրամանի հրապարակումից օրեր անց:

Երևանի «Կոմունիստ» թերթի մի հաղորդումից տեղեկանում ենք, որ 1920 թ. դեկտեմբերի 9-ին Աղստաֆայով Երևան են ժամանել Հայաստանի հեղկոմի անդամներ Ալ. Բեկզադյանը և Ի. Դովլաթյանը[15]: Մեր ձեռքին է Հայհեղկոմի դեկտեմբերի 12-ի հրամանը Ալ. Բեկզադյանին «արտաքին գործոց եւ պարենաւորման ժողովրդական կոմիսար» նշանակելու մասին[16]: Այս պարագայում շատ տրամաբանական կարող է թվալ արտգործժողկոմատի կազմավորման օրը դեկտեմբերի 12-ը համարելը: Սակայն այդպես վարվելու համար մեզ խանգարում է առնվազն երկու հանգամանք:

Առաջինը Հայհեղկոմի դիվանապետ Համլիկ Թումանյանի ստորագրությամբ 1920 թ. դեկտեմբերի 10-ի շրջաբերականն է՝ ուղղված արտաքին գործերի կոմիսարիատին, որով պահանջվում էր հենց նույն օրը ուղարկել կոմիսարիատի աշխատակիցների ցուցակը և զբաղեցրած սենյակների թիվը[17]: Հաջորդը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության արտաքին գործերի վարիչ Ահմեդ Մուխտարին ուղղված ՀՍԽՀ դեկտեմբերի 10-ի հայտնի հայտագիրն է, որը ստորագրված է՝ «Խոր[հրդային] Հայաստ[անի] արտ[աքին] գործ[երի] կոմիսար Բէկզադեան»[18]: Տրամաբանական է կարծել, որ դեկտեմբերի 10-ին կազմավորվել էր ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատը, և Ալ. Բեկզադյանն իրականացնում էր ժողկոմի գործառույթներ: Ավելացնենք նաև, որ Հայաստանի ազգային արխիվում մեր ուսումնասիրած փաստաթղթերում «արտաքին գործերի նախարարություն» անվանում առկա է մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ ստեղծված փաստաթղթերում: Իսկ դեկտեմբերի 13-ով թվագրվող արտգործժողկոմատի ելից փաստաթղթերից մեկն ունի 30 համարը[19]: Բանն այն է, որ Մ. Պետրոսյանի՝ արտգործնախարարության վարիչ աշխատած օրերին ելից և մտից փաստաթղթերը շարունակում էին ՀՀ արտգործնախարարության

---

[13] Տե՛ս **Կարապետյան Հ. Ն.**, Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ. Սարգիս Կասյան, Ալեքսանդր Բեկզադյան, Վլադիսլավ Կասպարով, Եր., 1967, էջ 364-411:

[14] **Եսայան Ա. Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922 թթ., Եր., 1967, էջ 356-357:

[15] Տե՛ս «Կոմունիստ» (Երևան), 11 դեկտեմբերի 1920 թ., № 6:

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 3, ֆ. 122, ց. 1, գ. 8, թ. 3:

[17] Տե՛ս նույն տեղը, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 2:

[18] Տե՛ս «Կոմունիստ» (Երևան), 14 դեկտեմբերի 1920 թ., № 8: Նաև՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 422-424, փաստ. № 275:

[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 13, թ. 7:

փաստաթղթերի թվահամարները: Փաստորեն, ստեղծման պահից սկսած՝ արտգործժողկոմատը ակտիվ գործունեություն էր իրականացնում, քանի որ 3 օրերի ընթացքում պատրաստել էր արդեն 30 ելից փաստաթուղթ: Հետաքրքրական է, որ 1920 թ. դեկտեմբերի 28-ին սոցիալական ապահովության ժողկոմատին ուղարկված արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի աշխատակիցների հաստիքացուցակում Ալ. Բեկզադյանի կոմիսարական ստաժի սկիզբ նշված է դեկտեմբերի 2-ը՝ Հայաստանի իրական խորհրդայնացման օրը[20]: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՍԽՀ իշխանությունները որոշ ժամանակ Հայաստանի խորհրդայնացման օր են համարել դեկտեմբերի 2-ը: Բնորոշ է, որ 1921 թ. հոկտեմբերի 29-ին պատրաստված արտգործժողկոմատի աշխատակիցների հաստիքացուցակում Առաջին Հանրապետության շրջանից ժողկոմատում աշխատող պաշտոնյաների համար որպես աշխատանքային սկզբնաժամկետ է նշված 1920 թ. դեկտեմբերի 2-ը[21]:

Փաստորեն, ՀՍԽՀ արտաքին հարաբերություններն իրականացնող վարչական կառույցը՝ արտաքին գործերի ժողկոմատը, ստեղծվել, իսկ Ալ. Բեկզադյանը ժողկոմի գործառույթներ է սկսել իրականացնել 1920 թ. դեկտեմբերի 10-ից: Միայն երկու օր անց՝ դեկտեմբերի 12-ին, Հայհեղկոմի հրամանով Ալ. Բեկզադյանը հաստատվել է ժողկոմի պաշտոնում: Այս խառնակ շրջանում նման պրակտիկան շատ տարածված էր: Իրավացի է Վ. Ռ. Նազարյանը, երբ գրում է, թե խնդրո առարկա ժամանակաշրջանում «պետք էր ամենից առաջ գործով հաստատել և ամրապնդել սովետական պետականությունը հանրապետությունում, ավելի ուշ թողնելով իրավաբանական ձևակերպումների կատարելագործումը»[22]:

Ալեքսանդր Բեկզադյանի՝ Երևան ժամանելուց և արտաքին գործերի ժողկոմի գործառույթները ստանձնելուց հետո Մովսես Պետրոսյանը, ինչպես երևում է արխիվային վավերագրերից, սկզբնական շրջանում իրականացնում էր ժողկոմի տեղակալի կամ, ինչպես այն շրջանում էին կոչում, օգնականի գործառույթները: 1920 թ. դեկտեմբերի 10-ին և 28-ին պատրաստված երկու փաստաթղթերում նա հիշատակվում է իբրև «նախարարի օգնական»[23]: Այս առումով ճիշտ չէ պատմահրավագիտական գրականության մեջ տեղ գտած այն ձևակերպումը, թե արտաքին գործերի ժողկոմը «տեղակալ կամ օգնական չուներ»[24]: Այլ խնդիր է, որ Մ. Պետրոսյանի՝ արևելյան բաժնի վարիչ նշանակվելուց հետո ժողկոմի օգնականի հաստիքը վերացվեց:

Նշանակվելով խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ալ. Բեկզադյանը ժառանգեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կառուցվածքը և անձնակազմը: Անձնակազմի անդամներից շատերը կարևոր դերակատարություն էին ունեցել ՀՀ արտգործնախարարության աշխատանքների կազմակերպման գործում և փորձառություն ձեռք բերել, ինչը օգտակար կարող էր լինել նորաստեղծ արտգործժողկոմատի համար: Կարծում ենք, այս առումով սուբյեկտիվ է Ա. Ա. Եսայանը, երբ գրում է, թե «Արտգործժողկոմատը գործի անցավ ձևավորված

[20] Տե՛ս նույն տեղը, գ. 30, թ. 2:
[21] Տե՛ս նույն տեղը, գ. 192, թ. 1-21:
[22] Նազարյան Վ. Ռ., նշվ. աշխ., էջ 61:
[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 15, գ. 30, թ. 2:
[24] Եսայան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 363:

ապարատի լիակատար բացակայության ... պայմաններում»[25]: Մինչդեռ իրականությունն այն է, որ արտգործժողկոմատում սկզբնական շրջանում պահպանվել են նախկին արտգործնախարարության մի շարք բաժինների անվանումները, իսկ աշխատակիցներից շատերին վստահվել են պատասխանատու պաշտոններ: Այսպես, արտգործժողկոմատի պաշտոնյաների մեզ հայտնի առաջին ցուցակը թեև անթվակիր է, բայց դատելով բովանդակությունից՝ այն կազմվել է 1920 թ. դեկտեմբերին: Ամենայն հավանականությամբ, ցուցակը պատրաստվել է դեկտեմբերի 10-ին արտաքին գործերի ժողկոմատին ուղղված Հայհեղկոմի այն շրջաբերականի համաձայն, որով պահանջվել էր նույն օրը ևեթ ուղարկել կոմիսարիատի աշխատակիցների ցուցակը: «Ցուցակ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատի պաշտոնեաների» վերնագրված փաստաթղթում[26] բացակայում է արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի անունը. ցուցակը գլխավորում է «նախարարի օգնական» Մ. Պետրոսյանը: Այստեղից հետևում է, որ այդ փաստաթուղթը կազմվել է դեկտեմբերի 10-ին, երբ Հայհեղկոմը փաստացի լուծել էր արտգործժողկոմատի ստեղծման խնդիրը, սակայն Ալ. Բեկզադյանը դեռևս ամբողջովին չէր ստանձնել ժողկոմի գործառույթները: Խնդրո առարկա ցուցակում Մովսես Պետրոսյանին հաջորդում են ընդհանուր քարտուղար Ալեքսանդր Տեր-Հակոբյանը, քաղաքական բաժնի վարիչ Պողոս Յակուլյանը, արտասահմանյան հաստատությունների բաժնի վարիչ Միհրան Խոջամիրյանը, տեղեկատու բաժնի վարիչ Մուշեղ Արզումանյանը, գաղութային բաժնի վարիչ Ներսես Բաբայանը, դիվանապետ Վահան Սարպեյանը, գլխավոր հաշվապահ Տաճատ Խաչվանքյանը և այլք: Բացի գաղութային բաժնի վարիչ Ն. Բաբայանից (բաժինը ստեղծվել էր ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ)՝ վերը հիշատակված անձանց նույն պաշտոնները վարելիս տեսնում ենք նաև Համազասպ Օհանջանյանի ՀՀ վարչապետ և արտգործնախարար լինելու (1920 թ. մայիս-նոյեմբեր) շրջանում[27]:

1921 թ. հունվարի 5-ի դրությամբ ժողկոմատն ուներ 17 աշխատակից: Որոշ պաշտոնյաների գործառույթները փոփոխվել էին, ստորաբաժանումները անվանափոխվել՝ օրինակ՝ Մ. Պետրոսյանն արևելյան բաժնի վարիչ էր, արտասահմանյան հաստատությունների բաժինը վերակազմավորվել էր հյուպատոսական բաժնի, որի վարիչի պաշտոնում շարունակում էր մնալ Մ. Խոջամիրյանը, նախկինում դիվանապետ Վ. Սարպեյանն իրականացնում էր պատասխանատու գործավարի գործառույթներ[28]:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ 1920 թ. դեկտեմբերի 3-10-ին ՀՍԽՀ արտաքին գործերի նախարարության ժամանակավոր վարիչի պարտականությունները կատարում էր Մ. Պետրոսյանը: ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատը կազմավորվել, իսկ Ալ. Բեկզադյանը սկսել է ժողկոմի գործառույթներ իրականացնել 1920 թ. դեկտեմբերի 10-ին: Կազմավորմանը հաջորդած առաջին ամիսներին ժողկոմատի անձնակազմը կտրուկ փոփոխությունների չենթարկվեց. այստեղ շարունակում էին պաշտոնավարել ՀՀ արտգործնախարարության աշխատակիցները: Պարզորոշ տես-

[25] Նույն տեղում:
[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 15:
[27] Տե՛ս նույն տեղը, ֆ. 200, ց. 1, գ. 617, թ. 89:
[28] Տե՛ս նույն տեղը, ֆ. 114, ց. 1, գ. 40, թ. 5:

նում ենք, որ ինչպես այլ պետական իշխանության մարմինների, այնպես էլ արտգործժողկոմատի պարագայում խորհրդային իշխանությունները (հատկապես սկզբնական շրջանում) գրեթե ամբողջությամբ պահեցին նախկինից ժառանգած կառուցվածքն ու անձնակազմը:

АМО СУКИАСЯН – ***Из истории формирования Народного комиссариата иностранных дел Арм. ССР.*** – 2 декабря 1920 г. в Армении была установлена советская власть. Прибыв 4 декабря в Ереван, Армревком приступил к формированию органов власти. Сопоставляя архивные документы и сообщения прессы того времени, автор показывает, что Народный комиссариат иностранных дел Советской социалистической республики Армения фактически был сформирован 10 декабря 1920 г. В статье также освещается деятельность заведующего Министерством иностранных дел ССРА М. Петросяна со дня советизации до 10 декабря. Поясняется, что после формирования наркомата бывшие сотрудники Министерства иностранных дел РА продолжили свою деятельность в советском Наркоминделе.

HAMO SUKIASYAN – ***From the history of the formation of People's Commissariat of Foreign Affairs of Arm SSR.*** – On December 2, 1920, Soviet power was established in Armenia. On December 4, having arrived in Yerevan, Armrevcom started to assign local authorities. Against the analysis of archive materials and press releases of that period, the author demonstrates that People's Commissariat of Foreign Affairs of ArmSSR was actually formed on December 10, 1920.

The paper also dwells on the activities of the Head of the Ministry of Foreign Affairs of ArmSSR M. Petrosyan (from December 2 to December 10). It appears that after the establishment of People's commissariat, the former officials of the Ministry of Foreign Affairs of the first Republic of Armenia joined the People's Commissariat of Foreign Affairs.